

տակաւ ի ներքուստ միմեանց խառնուելով կը կազմեն մեծ ջուրն Մատուռայ որ և 5 ժամ ընթացքով կը թափի Ներասխ:

1. Մեծ ճիւղն է Մատուռայ որ կը սկսի Բօզ-Թէփէի հիւսիսէն, $\frac{1}{2}$ ժամ սպիտակ գորշ և $\frac{1}{2}$ ժամ կապոյտ ժայռերու միջէն խոր խոր ձոր մի կազմելով կը յառաջէ, կը զարնուի աջ ափի վերայ բարձրացած Մատուռ բերդի ստքին. կը շարունակէ 1 ժամ մինչև Վանք, որ կայ մի տափարակ վայրի վերայ գեանդուած 20 տուն աւերակօք, յորմէ $\frac{1}{2}$ ժամ նոյն ուղղութեամբ ընթանալով կեանկ կոչուած վայրի վերայ կը դառնայ ի հիւսիս, 1 $\frac{1}{2}$ ժամ վերջը ձախ ափի վերայ թողլով Տէկիրման գիւղը՝ աստի մէկ ժամէն կը մանէ Ներասխ:

2. Սև ձոր.—Այս ջուրն ևս կըսկսի Բօզ-Թէփէի արևմտեան հիւսիսայէն երեսէն, Մատուռի ջրի գլխէն 1 ժամ յարեմուտս, և 2 ժամ ի հիւսիս արևմուտս կը թափի Մատուռի մէջ հանդէպ վանքին:

3. Ալոյի մեշի ձոր.—Արսկսի Սև ձոր անունով 1 ժամ արևմուտքէ, կերկարի 2 ժամ ի հիւսիս, $\frac{1}{2}$ ժամ վանքէն խոնարհ կը խառնուի Մատուռայ:

4. Քօր-Փունդար.—Սա ևս կըսկսի Ալոյի ջրի գլխից $\frac{1}{2}$ ժամ արևմուտքէն և կերկարի 3 ժամ ի հիւսիս, Մատուռի ի հիւսիս դարձուածէն $\frac{1}{4}$ ժամ խոնարհ կը խառնուի:

Գիւղն կը գանուի սկսուածքէն մէկ ժամ ցածր, $\frac{5}{4}$ ժամ Քորփունդարի արևմուտքէ կը սկսի Չէչէքլու, որ ձախ ափի վերայ թողլով իր անուամբ կոչուած գիւղն, 5 ժամէն կերկարի Նրասխ:

6. Բաղչաճուխ.—Արսկսի Չիչէքլուայ $\frac{1}{2}$ ժամ յա-